



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի անուանակոչութեան տօնին առթիւ, Թեմիս բարեջան Առաջնորդ բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, յանուն Թեմիս հոգեւորականաց դասուն, Կրօնական ժողովին եւ Ազգ. վարչութեան, ժողովականութեան եւ անձնապէս, շնորհաւորական նամակ մը յղեց Նորին Սրբութեան, մաղթելով առողջութիւն, անսպառ կորով եւ արեւշատ երկար տարիներ, որպէսզի մեր եկեղեցին եւ ժողովուրդը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, ինչպէս նաեւ մեր բոլոր Թեմերը ընդ երկար վայելեն Վեհափառ Հայրապետին հովանին եւ իմաստուն առաջնորդութիւնը:

ՆԱԵՒ ՆՈՐԱԾԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորական նամակներ յղեց նաեւ նորած սրբազաններու Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեանի, Բաբգէն Եպս. Չարեանի, եւ Նշան Եպս. Թօփուգեանի, որոնք, ինչպէս ծանօթ է, Հոգեգալստեան Տօնին օրը, Վեհափառ Հայրապետին ձեռամբ ստացան եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում:

THE PRELATE CONGRATULATES H.H. CATHOLICOS ARAM I

On the occasion of the name day of His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, sent a congratulatory letter to His Holiness on behalf of the Religious and Executive Councils. The Prelate wished the Pontiff health and long life, so that we may all enjoy the wisdom and guidance of the Catholicos for years to come.

His Eminence also sent congratulatory letters to the three newly ordained Bishops, Bishop Anoushavan Tanielian, Bishop Papken Tcharian, and Bishop Nshan Topouzian, who were consecrated by His Holiness on the day of the Feast of Pentecost.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԼԱ ԶՐԵՍԵՆԴԱՅԻ ՄԷՉ

Կիրակի, Յունիս 11-ին Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ եւ ձեռնադրութիւն տեղի պիտի ունենայ Զրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ մէջ, կէսօրէ ետք ժամը 1-ին, Ս. Պատարագի ընթացքին, Լա Զրեսենթայի

Մոնթրոզ փողոցին վրայ գտնուող Unity Church of the Valley եկեղեցւոյ մէջ, որուն հասցէն է՝ 2817 Montrose Avenue, La Crescenta:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ այս ուրախ առիթով պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

Ս. Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի կատարէ դպրաց ձեռնադրութիւն եւ ուրարներու տուչութիւն: Առաջնորդ Սրբազանին պիտի սպասարկէ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը մասնակից ըլլալու Ս. Պատարագի արարողութեան, ձեռնադրութեան եւ ականջալուր ըլլալու Առաջնորդ Սրբազանին հոգեւոր պատգամին:

HOLY MASS AND ORDINATION OF ACOLYTES AT THE LA CRESCENTA PARISH

On Sunday, June 11, at 1:00 p.m., the Prelate will conduct Holy Mass services and deliver his sermon at the Armenian Apostolic Church of La Crescenta, at the Unity Church of the Valley Church located at 2817 Montrose Avenue in La Crescenta.

During Mass, the Prelate will also ordain acolytes. Assisting the Prelate at the altar will be Very Rev. Fr. Barthev Gulumian.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԵՔ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔ ԵՒ ՄՐՅՈՒՄ

Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ գործող երիտասարդաց միութիւնները աշխոյժ աշխատանք կը տանին ծխական մեր շրջաններուն մէջ:

Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ երիտասարդաց յանձնախումբը վերջերս երկու հաւաքներ կազմակերպեց, Չորեքշաբթի, Մայիս 31-ին եւ Չորեքշաբթի Յունիս 7-ին, մասնակցութեամբ աւելի քան 100 երիտասարդ-երիտասարդուհիներու: Այս հաւաքներուն կը մասնակցէին Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ, Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ պատանեաց եւ երիտասարդաց յանձնախումբերու անդամ-անդամուհիները:

Չորեքշաբթի, Մայիս 31-ի հաւաքին, հոգեւոր խորհրդածութեան նիւթն էր «Չարին դեմ պայքարելու հոգեւոր զէնքերը», առնուած Եփեսացիներու ուղղուած նամակին 6-րդ գլուխի 10-20 համարներէն: Չեկուցաբերն էր Միքայէլ Կիւրիւմեան: Իսկ Յունիս 7-ին Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան խօսեցաւ հայ եկեղեցւոյ պատարագին եւ եկեղեցական զգեստներու եւ սպասներու մասին, բացատրութիւններ տալով իւրաքանչիւրին դերին ու խորհուրդին մասին:

Հոգեւոր հաւաք-հանդիպումներէն ետք, Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարանի մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ միջ-ծխական երիտասարդաց

խումբերու կողովագնդակի (basketball) մրցում մը, ստեղծելով խանդավառ մթնոլորտ:

Ազգ. Առաջնորդարանի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան Կեդրոնական Յանձնախումբը կոչ կ'ուղղէ մեր երիտասարդութեան, որ անդամ դառնան իրենց ծխական եկեղեցիներու երիտասարդական եւ պատանեկան խումբերուն՝ սերտելու Սուրբ Գիրքը, ծանօթանալու հայ եկեղեցւոյ, տօներուն եւ սուրբերու կեանքին, ազգային մեր ավանդութիւններուն եւ անցեալի ժառանգութեանց: Հետաքրքրուողներ բարի ըլլան հեռաձայնել եկեղեցիներու գրասենեակները, կամ մանրամասնութեանց համար կապ հաստատել իրենց շրջանի հովիւներուն եւ երիտասարդաց Վարիչներուն հետ:

PRELACY YOUTH GROUP ACTIVITIES

We are pleased to give you details about the activities of the Prelacy youth groups serving under the auspices of the Western Prelacy, specifically at this time the two activities recently organized by the St. Garabed youth group. The first gathering took place on Wednesday, May 31, and the second on Wednesday, June 7, with over 100 youth in attendance. Youth from Pasadena's St. Sarkis Church and from Glendale's St. Mary's Church also participated in both gatherings.

At the first gathering, Michael Gurunian spoke of "The spiritual armaments needed to fight against evil", taken from Chapter 6 verses 10-20 of Ephesians. At the second gathering, Very Rev. Fr. Barthev Gulumian enlightened the youth about the Armenian Church's Holy Mass and vestments.

Following both gatherings, the youth enjoyed a game of basketball at the gym of Rose and Alex Pilibos High School.

The Western Prelacy Youth Directorate Committee urges all youth to join their local church's youth group, to study the Bible, and to become familiarized with the Armenian Church, feasts, saints, and traditions.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԴԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ-ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ

Չորեքշաբթի, 7 Յունիսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ Հայ Դատի գրասենեակին հրաւերով մամլոյ ասուլիսի մը, որ կազմակերպուած էր օր մը առաջ տեղի ունեցած Քալիֆորնոյ Նահանգային ընտրութիւններուն լոյսին տակ: Ներկայ էին մեր շրջանի կրօնական, քաղաքական ու միութեանական գրեթէ բոլոր ներկայացուցիչները:

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորանքի խօսք ուղղեց ընտրութիւններէն յաղթական դուրս եկած եւ թեկնածու ներկայացած անձնաւորութեանց, վեր առաւ ընտրութիւններուն մասնակցութեան կարելորութիւնը՝ իբրեւ քաղաքացիական պարտականութիւն եւ իրաւունք, ապա նաեւ շեշտեց հայութեան միակամութեան եւ միասնականութեան կարելորութիւնն ու արժէքը:

PRELATE PARTICIPATES IN A POST-ELECTION PRESS CONFERENCE BY THE ANC

In the evening of Wednesday, June 7, the Prelate was present at a press conference at the California Armenian Youth Center, organized in light of the California primary elections that had taken place the previous day. Also present were clergy and representatives from Armenian organizations and the community.

The Prelate congratulated the candidates and winners of the elections, and stressed the importance of participating in elections as every citizen's obligation and privilege, and the value of unity for the Armenian people.

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

Ուրբաթ, Յունիս 9-ին, մեծարանքի հանդիսություն մը տեղի ունեցաւ Կլենտէյլի Brandview Collection սրահին մէջ, ի պատիւ հայրենի բազմավաստակ մտաւորական եւ հանրային գործիչ Գարեգին Չուգասզեանի:

Ձեռնարկը կազմակերպուած էր Հայկական Ճարտարապետութիւնն Ուսումնասիրող Կազմակերպութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու բաժանմունքի կողմէ:

Առաջնորդ Սրբազան հօր նախապէս տրուած հրաւերին ընդառաջելով, ձեռնարկին ներկայ եղաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Թինյ. Աթմաճեան, որ փոխանցեց Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորանքը:

RAA BANQUET HONORS GAREGIN CHOOKASZIAN

On Friday, June 9, a banquet was held at Glendale's Brandview Collection, organized by the Organization of Research on Armenian Architecture, to honor Garegin Chookaszian.

Rev. Vazken Atmajian of Glendale's St. Mary's Church represented the Prelate and expressed the Prelate's blessings and congratulations.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ Կ'ԸԼԼԱՅ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՆՈՐ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻՆ Ի ՆՊԱՍՏ ԶԵՌՆԱՐԿԻՆ

Շաբաթ, 10 Յունիսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ Կլենտէյլի Նոր Հայ Կեդրոնին ի նպաստ հանգանակային ձեռնարկին, որ տեղի պիտի ունենայ քաղաքի «Հիլթըն» պանդոկին մէջ: Առաջնորդ Սրբազանը այս

առիթով պիտի փոխանցե ծրագիրին յաջողութեան իր բարեմաղթութիւններն ու օրհնութիւնը:

Յիշեցնենք, որ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից կառուցելի կեդրոնին հիմաքարի օրհնութիւնը կատարած էր Վեհափառ Հայրապետը, անցեալ Հոկտեմբերին, մեր Թեմին շնորհուած հովուապետական այցելութեան առիթով:

FUNDRAISING BANQUET FOR THE GLENDALE ARMENIAN CENTER

On the evening of Saturday, June 10, the Prelate will attend a fundraising banquet to benefit the Armenian Center planned in Glendale. At the banquet, which is being held at the Glendale Hilton, the Prelate will deliver his blessings and best wishes for the successful completion of the project.

It is worthwhile to recall that the foundation of the center, which will be erected next to St. Mary's Church, was blessed by H.H. Catholicos Aram I in October during His Pontifical visit.

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ ԵՒ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ուսումնական 2005-2006 տարեշրջանը կը հասնի իր աւարտին եւ այս օրերուն, տեղի կ'ունենան մեր Թեմի Ազգային Վարժարաններու եւ եկեղեցիներու Կիրակնօրեայ դպրոցներու ամավերջի հանդեսերը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Կիրակի, Յունիս 11-ին, կ. ե. ժամը 1-ին, Ս. Պատարագէն ետք, »Կարապետեան« սրահին մէջ տեղի պիտի ունենայ Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի հանդէսն ու վկայականներու բաշխումը:

Իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչը, Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ հանդէսին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

Նոյն օրը եւ նոյն պահուն, տեղի պիտի ունենայ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Կիրակնօրեայ վարժարանի հանդէսը, եկեղեցւոյ համալիրին մէջ:

Չուգահեռաբար, ժամը 2-ին, տեղի պիտի ունենայ Ֆերահեան Ազգ. վարժարանի Մանկապարտեզի հանդէսը, վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ:

Շաբաթ, Յունիս 10-ին, կ.ե. ժամը 5-ին, տեղի պիտի ունենայ Մոնթեպելլոյի Մետրոպեան Ազգ. վարժարանի Մանկապարտեզի հանդէսը, վարժարանին մէջ:

ՖԵՐԱՅԵԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Հանդէսներուն զուգահեռ, Շաբաթ, Յունիս 10-ի երեկոյեան, տեղի պիտի ունենայ Ֆերահեան Ազգ. Երկրդ. վարժարանին տարեկան ճաշկերոյթ-արահանդէսը, վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը, եւ կազմակերպուած է վարժարանի տնտեսական յանձնախումբին կողմէ:

PRELACY SCHOOLS' GRADUATION CEREMONIES AND BANQUETS

In the coming weeks, Prelacy schools and Sunday schools will have their year-end graduation ceremonies and banquets, under the auspices of the Prelate.

On Sunday, June 11, following Holy Mass, Hollywood's St. Garabed's Sunday School graduation ceremony will take place at 1:00 p.m. at Karapetian Hall. Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate and convey his blessings.

On the same day, Montebello's Holy Cross Cathedral's Sunday School will have its graduation ceremony at 1:00 p.m.

At 2:00 p.m. of the same day is the graduation ceremony of the kindergarten class of Ferrahian School.

And on Saturday, June 10, at 5:00 p.m., Mesrobian School's Kindergarten class will have its graduation ceremony at the school hall in Montebello.

Finally, in the evening of Saturday, June 10, the annual banquet of Ferrahian High School, organized by the school's Finance Committee, will take place at Avedissian Hall. The Prelate will be in attendance.